ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի թիվ 8 նիստի, կայացած 2024թ հոկտեմբերի 11-ին ք. Եղեգնաձոր.

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 6 անդամներից 6-ը, ինչպես նաև Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դավիթ Հարությունյանը, որը ըստ կարգի հանդիսանում է հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Միքաելյան / մարզպետ /
քարտուղար՝ Մ. Մեսրոպյան
անդամներ՝ Գ. Մարգարյան
Ա. Ղազարյան
Հ. Նազարյան
Է. Հովհաննիսյան
Դ.Հարությունյան

Հանձնաժողովը հաստատեց հետևյալ օրակարգը՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի 1 միավոր քաղաքացու սեփականություն հանդիսացող 0.18հա /ծածկագիր 10-001-0309-0025/ վարելահողը փոխադրել խոտհարքի, չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

Լսեցին- Հանձնաժողովի նախագահ Կ. Միքաելյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի կողմից ներկայացված դիմումը:

Զեկուցողը նշեց՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի դիմումը և մեր հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ վերը նշված հողատարածքը փաստացի խոտհարք է, ուստի տալիս ենք մեր դրական եզրակացությունը 0.18հա /ծածկագիր 10-001-0309-0025/ տարածքը, որը հանդիսանում է քաղաքացու սեփականություն՝ դասել խոտհարքերի շարքին:

Առաջարկվեց Եղեգնաձոր համայնքի ղեկավարին տալ դրական եզրակացություն համապատասխան որոշումը կայացնելու:

Հանձնաժողովը ելնելով վերոգրյալից՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ՝ թույլատրել Եղեգնաձոր համայնքի ղեկավարին կայացնել համապատասխան որոշում Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի 1 միավոր 0.18ա /ծածկագիր 10-001-0309-0025/ քաղաքացի՝ Վահե Փանոսյանի սեփականության իրավունքով պատկանող վարելահողը փոխադրել խոտհարքի, չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

2. Հանձնաժողովի որոշման մեկական օրինակ տրամադրել՝ հողամասի սեփականատիրոջը, համայնքի ղեկավարին:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Քարտուղար՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ